



Սյունյաց երկիր

ՀԻՆՊԵՏՎԵԹԻ, 23 ՀՈՒՆԻՍԻ 2016Թ.
№ 19 (395)

www.syuniacyerkir.am

...àôĀĀ āĭ, āñ
â 3 ĭ 3 ëáôÛ ĭ Û»½«
3 ŪĒ ĭ 3 ÛùĀĒ
yð² Ûëàò²
À Ē² èàèÛ àòĪ à



ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանում

ՀՀ Ազգային ժողովը հունիսի 15-ին շարունակել է արտահերթ նստաշրջանի աշխատանքը եւ առաջին ընթերցումով քննարկել «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» եւ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենսդրական փաթեթը: ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը նշել է, որ երկրում վարչատարածքային բարեփոխումների շարունակականությունն ապահովելու նպատակով առաջարկվում է ՀՀ Արարատի մարզի Ուրցածոր, ՀՀ Երևանի մարզի Ամասիա, Աշոցք, Սարապատ եւ Բերդաշեն, ՀՀ Սյունիքի մարզի Գորիս, Մեղրի, Տեղ, Գորայք, ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք, Ջերմուկ, Ջառիթափ, ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան, Այրում, Կողբ համայնքներում համայնքների միավորման միջոցով ձեւավորել համայնքային փնջեր: Իրավական ակտերի փաթեթի կիրառման դեպքում կապահովվի համայնքների խոշորացման գործընթացի իրավական բազան: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում առաջարկվող փոփոխության նպատակն է սահմանել վերոնշյալ համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամկետը, ինչպես նաեւ այդ ընտրությունների կազմակերպման եւ անցկացման կարգը:

Սանկտ Պետերբուրգում Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահները հանդես են եկել համատեղ հայտարարությամբ

Սանկտ Պետերբուրգում կայացել է Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների եռակողմ հանդիպումը, որից հետո նախագահներ Սերժ Սարգսյանը, Վլադիմիր Պուտինը եւ Իլհամ Ալիևը հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, որում մասնավորապես ասված է.

«Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության եւ Ադրբեջանական Հանրապետության նախագահները 2016թ. հունիսի 20-ին հանդիպեցին Սանկտ Պետերբուրգում՝ ՌԴ նախագահի իրավերով եւ

քննարկեցին Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանը վերաբերող հարցեր: Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանական Հանրապետության նախագահները վերահաստատեցին Վիեննայում ս.թ. մայիսի 16-ին կայացած հայ-ադրբեջանական զագաթնաժողովի պայմանավորվածությունները՝ ուղղված հակամարտության գոտում իրավիճակի կայունացմանը եւ խաղաղ գործընթացի առաջընթացին նպաստող մթնոլորտի ստեղծմանը: Այդ նպատակով նրանք համաձայնեցին մասնավորապես ավելացնել հակամարտության գոտում միջազգային դիտորդների թվաքանակը: Նրանք

Ստուգվել է Սյունիքում տեղաբաշխված զորամիավորման մարտական պատրաստության վիճակը

Բոլոր ստորաբաժանումները պատրաստ են, հարկ եղած դեպքում, ջանջախիչ հակահարված տալու հակառակորդի հարձակողական գործողություններին

Գործուղվել էի մասնակցելու բանակային կորպուսում ՊՆ-ի կողմից իրականացված հսկողական ստուգումների արդյունքների ամփոփմանը: Առաջին անգամ էի նման միջոցառման մասնակցելու: Համոզված էի, որ անպայման հանդիպելու եմ ապրիլյան դեպքերի մասնակիցներից մի քանիսին կամ էլ նրանց

ընկերներին: Փորձեցի ինչ-որ ձեւով նախապատրաստվել... Ռուսական կայքէջերից մեկը հաճելի անակնկալ մատուցեց ինձ, նաեւ հավանաբար ինձ նման հազարներին: Հեռուստատեսությամբ ռուս հոգեւորականը պատմում էր մեր ժողովրդի մասին: Կրթված էր, քաջատեսույակ: Ասում էր՝ առաջինը հայ զինվորն է եղել, ու շեշտում էր՝ ոչ հույն, ոչ էլ հռոմեացի, այլ՝ հայ զինվորը, որ զենք է վերցրել պաշտպանելու իր հողը, իր հավատքը, քրիստոնեական



Անդրանիկ Մակարյան, գեներալ-մայոր, զորամիավորման հրամանատար

Հարցուպատասխանի ձեւաչափում Աժ պատգամավորներն անդրադարձել են համայնքների խոշորացման հարցում տեղական հանրաքվեի անցկացման նպատակահարմարությանը, խոշորացման կառավարման արդյունավետությանը, համայնքների զարգացման հայեցակարգին, համայնքներում կադրերի կրճատմանը, տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի բարելավմանը, համայնքներում ավագանիների ընտրությունների կարգին, որոնց վերաբերյալ պարզաբանումներ է ներկայացրել Վ. Տերտերյանը: Փաթեթի վերաբերյալ իրենց տեսակետներն են ներկայացրել պատգամավորները: Հիմնական զեկուցող, ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանն անդրադարձել է պատգամավորների հարցադրումներին եւ տվել պարզաբանումներ: Ամփոփելով քննարկումը՝ փոխնախարարը նշել է, որ կառավարությունն առաջարկում է ունենալ ավելի արդյունավետ կառավարման համակարգ: parliament.am

Դարբասում եւ Ախլաթյանում՝ համայնքի ղեկավարի ընտրությունը՝ հուլիսի 10-ին

ՀՀ կառավարության մայիսի 19-ի 501-Ն որոշմամբ ՀՀ Սյունիքի մարզի Ախլաթյան եւ Դարբաս համայնքների ղեկավարներ Արմեն Բեգլարյանի եւ Մայիս Միրզոյանի լիազորությունները վաղաժամ դադարեցվել են: Նշված համայնքների ղեկավարների արտահերթ ընտրությունները տեղի կունենան սույն թվականի հուլիսի 10-ին:

Սեփ. լրատվություն

ՄԻՒԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ. «Համայնքների խոշորացումը ժամանակի հրամայականն է, որի անհրաժեշտությունն արդեն մի քանի տարի է՝ առաջացել է»

Ազարակի պղնձամուլիբդենային կոմբինատում վերջերս տեղի ունեցած գործադուլի, Մեղրու տարածաշրջանում համայնքների սպասվելիք խոշորացման, ապրիլյան քառօրյա պատերազմի եւ առհասարակ տարածաշրջանում ներկայումս իրականացվող ծրագրերի մասին է զրույցն Ազարակի քաղաքապետ Մխիթար Զաքարյանի հետ:

– Պարոն Զաքարյան, հունիսի առաջին օրերին տեղեկություններ ստացանք, որ Ազարակի պղնձամուլիբդենային կոմբինատի հարստացուցիչ ֆաբրիկայում գործադուլ է, եւ իբր գործադուլի նախաձեռնողները ՀՀ երիտասարդական թեմի «Դավիթբեկյան ուխտերի» ներկայացուցիչներն են: Որքանով են այդ խոսակցությունները համապատասխանում իրականությանը:

– ՇՆՄարտությունն այն է, որ Ազարակի ՊՄԿ-ում գործադուլ է եղել, որը մեկնարկել է կոմբինատի հարստացուցիչ ֆաբրիկայից՝ մոտ 270 աշխատակցի մասնակցությամբ: Նշեմ, որ ֆաբրիկան ոչ միայն կոմբինատի, այլեւ Մեղրու ողջ տարածաշրջանի ամենամեծ արտադրամասն է, այսպես ասած՝ մեր հարվածային օղակը, տարածաշրջանի սիրտը: Գործադուլի մաս-



նակիցներից մեկը եղել է Հանրապետական կուսակցության ակտիվ երիտասարդներից, բայց երեւոյթը կուսակցականացնելը ոչ տրամաբանական է, քանի որ մասնակիցների թվում նաեւ այլ կուսակցության ներկայացուցիչներ կային: Բարձրացվել էին ներկոմբինատային, ներկուլեկտիվային հարցեր, որոնք բացառապես առնչվում էին գործատու-աշխատող հարաբերություններին: Իմ կարծիքով՝ գործադուլը նաեւ կոմբինատի արհմիության գործունեության բացթողմաներից է, չնայած անվտանգության հիմքեր չունեն այդ կառույցի հանդեպ: Մինչ

գործադուլին հասնելը, կոմբինատի աշխատակիցը պետք է գիտակցի, որ խնդիրների առկայության դեպքում կա մի կառույց, որ իրավասու է դրանք ըստ պատշաճի ներկայացնել համապատասխան մարմիններին, հակառակ դեպքում արհմիության գոյության իմաստը չեմ տեսնում: Ինչեւէ, գործադուլ է եղել, եւ, իմ խորին համոզմամբ, աշխատավորների պահանջն արդարացի էր: Որպես համայնքի ղեկավար՝ առաջին իսկ պահից գործադուլն ինձ համար դարձավ հրատապ միջամտու-

էջ 4

Սանկտ Պետերբուրգում Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի Նախագահները հանդես են եկել համադրել հայտարարությամբ

գոհունակություն հայտնեցին վերջին շրջանում շվեդական գծում իրադարձարի ռեժիմի պահպանման կապակցությամբ: Կայացավ կարգավորման առաջնային հարցերի շուրջ մտքերի հանգամանակից փոխանակում: Պետությունների ղեկավարները փաստեցին մի շարք հարցերի կապակցությամբ փոխըմբռնման հասնելու հանգամանքը, որոնց լուծումը հնարավորություն կընձեռի պայմաններ ստեղծել առաջընթաց արձանագրե-

լու ԼՂ հիմնախնդրի կարգավորման հարցում: Նախագահները նշեցին իրենց կանոնավոր շփումների կարևոր նշանակությունը եւ պայմանավորվեցին շարունակել դրանք նման ձեռագրով՝ ի լրումն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների աշխատանքի: Համանախագահները հրավիրված էին ներկա գտնվելու Սանկտ Պետերբուրգում կայացած հանդիպման եզրափակիչ հատվածին:

president.am

Արտուշ Դուկասյանն ընտրվել է Գորիսի պետական համալսարանի ռեկտոր

2016թ. հունիսի 9-ին Երեւանի «Double tree by Hilton» հյուրանոցի կոնֆերանս սրահում տեղի ունեցավ «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի խորհրդի նիստ՝ ղեկավարությանը ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահ, Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի:

Օրակարգում Գորիսի պետական համալսարանի ռեկտորի ընտրության հարցն էր:

ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2016թ. ապրիլի 19-ի հրամանով հայտարարվել էր մրցույթ Գորիսի պետական համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի համար: Մրցույթին մասնակցելու համար հայտ էր ներկայացրել մեկ թեկնածու՝ ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտուշ Դուկասյանը, ով այս տարվա փետրվարի 11-ից նույն համալսարանի ռեկտորի պաշտոնակատարն էր:

Արտուշ Դուկասյանը խորհրդի անդամներին ներկայացրեց «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի զարգացման ու բարեփոխման հայեցակարգը, որի շուրջ ծա-



վավեց մտքերի փոխանակություն: Այնուհետեւ տեղի ունեցավ փակ (զաղտնի) քվեարկություն, որի արդյունքներով Արտուշ Դուկասյանը միաձայն ընտրվեց «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի ռեկտոր:

Համալսարանի կառավարման խորհրդի նիստին մասնակցում էր խորհրդի 24 անդամից 22-ը:

ԹԵՆԻՍԱ ՄԱՐԻՈՅԱՆ

Ստուգվել է Սյունիքում տեղաբաշխված զորամիավորման մարտական պարաստության վիճակը

հավատքը: Պատմում էջ 1 էր Վարդանանց պատերազմի մասին եւ ընդհանրացնում՝ այսօր էլ այդ զինվորը կանգնած է իր պատմական հայրենիքի հողի վրա, որտեղ ամեն ինչ հայկական է, եւ օտարի ոչ մի հետք: Իսկ ռուս մեծահարուստ Գերման Ստեռլիգովը, ով ընտանիքով տեղափոխվել է Արցախ, իր էջում գրում է. «Աշխարհում ուրիշ ոչ մի տեղ մարդկային հոգին չի պահպանվել այնքան մաքուր ու անաղարտ, ինչպես այստեղ: Այստեղ դու կարող ես մեքենադ կանգնեցնել, բանալին թողելով իր տեղում՝ դռները բաց, ու գնալ եւ վերադառնալ հարող օրը: Ըո մեքենային, ունեցվածքիդ ոչինչ չի լինի»: Օտարից նման խոսքեր լսելիս հոգիդ փառավորվում է, հպարտությունը պարուրում է ամբողջ էությունդ... Այսպիսի տրամադրությամբ էլ հունիսի 19-ին հասանք Սիսիան:

Սիսիանում մեր ստեղծագործական խումբը նախ հանդիպեց զորամիավորման հրամանատար-

րի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ, գնդապետ Վահրամ Հարությունյանին: Նա մեզ տեղեկացրեց, որ ս.թ. հունիսի 13-ից սկսած կորպուսի բոլոր ստորաբաժանումներում ՊՆ հատուկ համաձայնագրով միջոցով իրականացվել են պլանային ստուգումներ: Նախ ստուգվել է շարային պատրաստակարարության վիճակը: Այնուհետեւ նոր պահանջների լույսի ներքո ստուգվել են զինվորների մարտական պատրաստակարարությունը, զինվորական կարգապահության վիճակը, զորամասերում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը: Ստուգումները ցույց տվեցին, որ բոլոր ստորաբաժանումները պատվով են կատարել իրենց առջեւ դրված խնդիրները, որոնցից ամենաառաջնայինը հարազատ երկրի սահմանների հուսալի պաշտպանությունն է: Հատկապես բարձր գնահատական է տրվել Սիսիանում տեղակայված զորամասի գործունեությանը:

Ստուգումների արդյունքներն

ամփոփելու համար Սիսիան էր ժամանել հսկողական ստուգումների համաձայնագրով նախագահ, ՊՆ ԱՀՏԱ վարչության պետ, գեներալ-մայոր Ալեքսան Ալեքսանյանը:

Ձինվորական փողային նվագախմբի տրամադրող երաժշտությունն ակամայից դեպի Համո Սահյանի անվան մշակույթի տուն էր կանչում սիսիանցիներին, բայց այդ օրը նրանք կարող էին նվագախմբին ունկնդրել միայն մշակույթի տանը հարող մայթերից. մշակույթի տուն մուտքը միայն զինվորականների համար էր:

Բացման հակիրճ խոսքից հետո գեներալ-մայոր Ալեքսանյանը ծայրը տալիս է բանակային զորամիավորման հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանին:

Ստուգատեսի արդյունքների ամփոփումից հետո զինվորական ծառայության ընթացքում բարձր ցուցանիշների հասնելու եւ օրինակելի զինվորական կարգապահության համար պաշտպանության



Սիսիանի զորամասի հրամանատար, գնդապետ Սմբատ Գրիգորյանը պարվոգիր է հանձնում աչքի ընկած զինվորներից մեկին

նախարարի եւ բանակային կորպուսի հրամանատարի հրամաններով մի շարք զինվորականներ պարգևատրվեցին պատվոգրերով եւ արժեքավոր նվերներով: Մի խումբ սպաներ եւ ժամկետային զինծառայողներ էլ պարգևատրվեցին գերատեսչական մեդալներով ու արժեքավոր նվերներով:

Հաճելի անակնկալ էր սպասվում զինվորական ծառայությունն ավարտած մի խումբ զինվորների: Հանդիսավոր պայմաններում զորացրվելուց զատ նրանք պարգևատրվեցին պատվոգրերով, գերատեսչական մեդալներով: Հա-

տուկ շնորհակալագրեր ուղարկվեցին լավագույն զինվորների ծնողներին:

Ստուգատեսի արդյունքների ամփոփումից հետո ՀՀ պաշտպանության նախարարության երաժշտական համույթի ուժերով ներկաների համար տրվեց համերգ:

...Սկսվում է զինվորների ուսուցման նոր փուլը, որի ընթացքում ամպայման հաշվի կառնվեն սույն ստուգումների ընթացքում հայտնաբերված թերությունները, վերջին ամիսների ժամանակ ծավալված գործողությունների դասերը:

ՌԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2016թ. հունիսի 18-ին Երեւանի «Մոսկվա» կինոթատրոնում տեղի ունեցավ «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության գործունեության 13-րդ տարեդարձի եւ կազմակերպության 9-րդ համագումարին նվիրված պաշտոնական միջոցառումը, որին մասնակցում էին կազմակերպության 301 մասնաճյուղից ժամանած 477 պատվիրակ, 33 Ազգային ժողովի պատգամավորներ, զինվորականներ, Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Իվան Վոլինկինը, հասարակական, քաղաքական, պետական գործիչներ, հոգեւորականներ:

Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին հայոց պետության սահմաններն անառիկ պահած եւ մարտիրոսված քաջորդիների հիշատակը:

Ներկաները դիտեցին «Հայոց արծիվների» տեսագրված փաստավերագրական համառոտ պատմությունը՝ «Ազգ. Հայրենիք. Պետականություն» խորագրով, որը պատմում էր «Այունյաց արծիվներին» 7-ամյա եւ «Հայոց արծիվներին» 6-ամյա գործունեության ժամանակ իրականացված 1426 միջոցառման մասին:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տեր-Տեր Գարեգին 2-րդի օրհնանքի եւ շնորհավորանքի խոսքը հնչեցնելուց հետո կազմակերպության գործունեության 13-րդ տարեդարձի առթիվ շնորհավորանքի խոսքով եւ հաշվետվությամբ հանդես եկավ կազմակերպության հիմնադիր նախագահ Խաչիկ Ասրյանը: Նա մասնավորապես ասաց. ««Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության 9-րդ համագումարին ներկա հայրենատեր հայեր,

Քսանհիճդ տարվա մեր անձնվեր գործունեության ամենափառաշեղ էջը հայոց անկախ պետականությունն է, որի շնորհիվ 600 տարի հետո հայոց սուրբ հողի վրա հառնեցինք որպես երրորդ հանրապետություն՝ մեր ձեռքերում ամուր պահելով հառնումի հաղթական դրոշմը, մեր բազուկներին կրելով Արցախի ազատագրության դրոշմը: Բազում խնդիրներով հանդերձ հայոց անկախ պետականությունը մեզ վերադարձրեց մեր արիական ոգին, որի համար պայքարում էին մեր հայրերը, ու շարունակում ենք պայքարել մենք...

Այն բազում գործերը, որ իրականացրել ենք մենք, ներառյալ ապրիլյան քառօրյա պատերազմին «Հայոց արծիվներ» մարտական ջոկատի՝ բարձր կարգապահությամբ մեկ ամիս Արցախի առաջնագծում գտնվելը, ապացուցում են, որ մեր հայրենիքի երդվյալ զավակներն ենք եւ շարունակելու ենք իրականացնել նրա անկատար երազանքները:

Ելնելով հայոց ազգային բանակի կողքին ավանդաբար կանգնած լինելու «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության երդմնապաշտությունից, Հայաստանն ու Արցախը հզոր ու պաշտպանված տեսնելու մեր համընդհանուր խնդիրներից՝ հայտարարում են.

Առաջին՝ «Հայոց արծիվների» համար սուրբ է հայոց հողը, հայոց անկախ պետականությունը: Այն ձեռք ենք բերել պայքարով, արյունով, մեր ոգու ուժով եւ մեծ հավատքով տանելու ենք հավերժություն: Մենք ենք հայոց ազգային պետականության ժառանգորդները եւ պատվով պետք է կրենք նրա երդվյալ քաղաքացու կոչումը՝ դառնալով նրա իրական կերտողն ու պաշտպանը:

Երկրորդ՝ հայոց բանակը մեր երկրի ու պետական անվտանգու-



«Արծիվների» գործունեության 13-րդ տարեդարձը եւ կազմակերպության 9-րդ համագումարը

թյան անգնահատելի երաշխավորն է ու կատարյալ պաշտպանը: Հայոց բանակն ազգի սիրտն է, իսկ մենք՝ նրա արյունատար երակները... Տասներեք տարվա մեր գործունեության ընթացքում «Հայոց արծիվների» հայրենամեծեր աշխատանքի գրեթե ամբողջ մասը նվիրված է եղել հայոց բանակին: Մեր ամուր կարգապահության, անձնվեր հայրենասիրության, փորձով ու իմաստությամբ պարտավոր ենք համալրել ազգային բանակի պաշտպանական դիրքերը՝ նրա մեծագույն հաղթանակներին ու քայլերին մշտապես աջակից լինելու հրահանգներով: Մենք չենք ընդունում նահանջի հրամաններ, մեր հաղթանակները կարծրացած են հայոց ազգի հերոս զավակների արյան շաղախով:

Երրորդ՝ «Հայոց արծիվներ» տեր ենք մեր ազգային ժառանգությանը՝ մեր ավանդույթներին, հայոց լեզվին ու մշակույթին, հայ ընտանիքի ամրությանն ու բազմազավակությունը: Մեր հաղթանակները կայուն են, իսկ ձեռքբերումները՝ անկասելի: Մենք պահանջատեր ենք եւ վերջ:

Չորրորդ՝ մեր գերխնդիրը հայոց զենի պաշտպանվածությունն է: Հայոց զենի արմատում են երկրի քաջարի ռազմիկը, հայրենատերը, մշակույթի, կրթության ու գիտության հանճարը... հայրենիքը: Հեռու պահենք մեր սուրբ զենը հայրենիքից, մեր տունն ավերող կոռուպցիայից, աղանդավորներից, թմրամուլներից եւ այլնից:

Հայազորացում. սա՛ է յուրաքանչյուր հայրենապահ հայի գերակայությունը:

Հինգերորդ՝ Հայաստանն աշխարհի հայության ուժն է, հայոց ազգի ներկա ու գալիք օրերի առիավատչյան: Մենք ազգովի ենք պատասխանատու մեր ձեռքբերումների եւ բացթողումների հա-

մար: Հայոց պետականությունն անընդհատ հզորացնելու ու նրա սահմաններն ամխոցելի պահելու երդումով՝ ապրիլյան պատերազմի օրերին Արցախի առաջնագծում մեր անսասան հավատարմությունն ու անկոտրում մարտունակությունն ապացուցած «Հայոց արծիվներ» ջոկատը եւ տասնյակ հազարավոր արծիվներ վստահեցնում ենք, որ ազգապահ հայ ժողովուրդը միշտ իր գերագույն գլխավոր հրամանատարի կողքին է եւ շարունակելու է մնալ իր հաղթանակների տերն ու պատասխանատուն, ու կրկին մեր զորակցությունն ենք հայտնում Հայաստանի Հանրապետության նախագահին՝ համոզված լինելով, որ ոչինչ չունենք հայոց ազգի թշնամուն գիջելու, այլ ունենք մեծ եւ հզոր քրիստոնյա Հայաստան կառուցելու առաքելություն:

Վեցերորդ՝ գտնվելով արեւելքի եւ արեւմուտքի խաչմերուկներում՝ հայոց աշխարհը մշտապես սաստակությունների գոհ է դարձել, հայրենագրվել, կորցրել իր պատմական էթնիկ տարածքները, իր ազգային հարստությունը: Հայնի տունն իր հայրենիքն է: Հայն իր օջախում է արարում որպես ազգ ու պետականություն: Մենք Հայաստանի ամբողջատիրության գինվորն ենք, նրա ներկա եւ ապագա անվտանգության երաշխավորը, Հայաստան-Արցախ-Սփյուռք՝ մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ պետականություն հավերժախոսության գաղափարակիրը: Մեր խնդիրը Հայաստան աշխարհի ներքին եւ արտաքին հզորության ամրագրումն է՝ հիմքում ունենալով հային բնորոշ օրինապաշտությունը, աշխատասիրությունն ու պատասխանատվությունը, քրիստոնապաշտ հավատքն ու միասնականությունը: Ազգային միասնականության մեր հզոր ուժով կերտելու ենք մեծ եւ հզոր քրիստոնյա Հայաստան:

Հայն ունի երկու հավատք՝ Աստված եւ Հայաստան, եւ թող Աստ-



ված ու Հայաստանը միշտ լինեն մեր արյան մեջ, մեր սրտերում եւ ուղեղներում:

Կեցցե՛ք դուք, կեցցե՛ Հայաստանը, Արցախն ու Սփյուռքը, կեցցե՛ հայրենապահ հայ ժողովուրդը...

Աստված բոլորիս պահապան, Աստված պահապան Հայաստանին, Արցախին ու Սփյուռքին»:

Կազմակերպության 9-րդ համագումարը «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության նախագահի միաձայն վերընտրեց Խաչիկ Ասրյանին:

Համագումարն ընտրեց նաեւ կազմակերպության ղեկավար մարմին՝ 135 անդամից կազմված խորհուրդ, ինչպես նաեւ վերահսկիչ հանձնաժողով՝ երեք անդամով:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից կազմակերպության ամենատարեց անդամը՝ 90-ամյա Արշակ Ռզզոյի Հարությունյանը, պարգևատրվեց «Աշխատանքային վաստակի համար» պետական պարգևով, իսկ կազմակերպության չորս ակտիվ անդամ պարգևատրվեցին ՀՀ նախագահի շնորհակալագրերով: ՀՀ վարչապետի կողմից գրող,

հրապարակախոս, կազմակերպության նախագահության անդամ Ռուզան Ասատրյանը պարգևատրվեց վարչապետի հուշամեդալով, իսկ կազմակերպության յոթ ակտիվ անդամ պարգևատրվեցին վարչապետի շնորհակալագրերով: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հրամանով, «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության գործունեության 13-րդ տարեդարձի կապակցությամբ, նախարարության պարգևատրվեցին կազմակերպության եւ «Հայոց արծիվներ» մարտական ջոկատի առավել ակտիվ անդամները:

Վերջում հնչեց «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության հիմնը, որից հետո տեղի ունեցավ հյուրասիրություն՝ կազմակերպության համագումարի մասնակիցների համար: **«Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության տեղեկատվության եւ հասարակախոսության հեղափոխական հանձնաժողով**

